№ 139 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1888 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6 № 139

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՑՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԵԿՈՂ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում Թամամշեվի տանը)։

Կայարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս են տարածվում վարակիչ հիւանդութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առողջապահութեան դասաւորութիւնը. Նամակ Ցարիցինից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՐՕՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Փաստաբան.

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

„Մշակի“ ընթերցողները արդէն գիտեն որ մեր քաղաքի լաւ բժշկներից մէկը՝ Գրիգոր Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի), յանձն է առել „Մշակի“ մէջ տպագրելու մի շարք բժշկական յօդուածներ։ Նրա հետևեալ յօդուածը լինելու է այն վարակիչ հիւանդութեան մասին, որը այս րօպէիս սաստիկ տարածված է Թիֆլիսի բոլոր թաղերում և ազգաբնակութեան բոլոր դասակարգերում։ Մենք խօսում ենք „Ծաղիկ“ հիւանդութեան մասին, որը, առհասարակ, այդքան զոհեր է տանում, մանաւանդ մանուկ սերունդի շրջանից և համարվում է մարդկութեան մէջ մահկանացութեան ամենամեծ պրօցէնտ պատճառող հիւանդութիւններից մին։

Թողնելով յիշեալ մանտզէտին Ծաղիկ հիւանդութեան էութեան, նրա վնասների, նրա տարածմանը առաջն առնելու հնարաւոր միջոցների մասին մանրամասնաբար խօսելու, մենք կը բաւականանք այստեղ յիշելով միայն այն անուրանալի ճշմարտութիւնը, որ ամեն մի վարակիչ հիւանդութիւն, ուրեմն և Ծաղիկը, աւելի նը-պաստաւոր հող են գտնում իրանց ընդարձակ և կորստաբեր տարածման համար մարդկային այն հասարակութիւնների մէջ, որոնք քաղաքակրթութեան աւելի ստոր աստիճանի վրա են կանգնած, որոնց մէջ քաղաքների և գիւղերի բարեկարգութիւնն ու մաքրութիւնը դեռ ևս զարգացման ստոր աստիճանի վրա են գտնվում։

Մինչդեռ Ռուսաստանում և մեզանում, Անդրկովկասում, ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւններ, ինչպէս դիֆտերիտը, տիֆը, Ծաղիկը և այլն, տարէն տասն երկու ամիս անպակաս են մեր թէ քաղաքներում և թէ մանաւանդ գիւղերում,—Եւրօպայի ամենաբարեկարգ երկիրներում, ինչպէս են Գերմանիան, Անգլիան, Շվէյցարիան, Բելգիան և Ֆրանսիան,—շատ քիչ է պատահում տեսնել որ այդ տեսակ հիւանդութիւններ այդչափ տարածվեն որքան մեզ մօտ, որտեղ նրանք, առանց չափազանցնելու կարելի է ասել՝ ոչնչացնում են ամբողջ գիւղեր....

Այդ իրողութիւնը պէտք է վերաբերել այն հանգամանքին, որ քաղաքակրթ Եւրօպայում մաքրութիւնը առօրեայ կեանքի մէջ ամենաանհրաժեշտ պայման է դարձել։

Եւրօպական երկիրների շարքում մասամբ բացառութիւն կարող են համարվել՝ իրանց ազգաբնակութեան հակառողջական և անպայման մաքրութեան դէմ մեղանչող կեցութեան կողմից,—Եւրօպայի հարաւային երկիրները, ինչպէս Սպանիան, Իտալիան, Յունաստանը և Թիւրքիան։

Իսկ մեզանում, կարելի է վստահութեամբ ասել, ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնները այն պատճառով այդքան խոր արմատներ են գցել ու հետզհետէ տարածվում են, փոխանակ պակասելու,—որովհետև մեր թէ քաղաքային և թէ մանաւանդ գիւղական ազգաբնակութեան կեցութիւնը, քաղաքների ու գիւղերի վիճակը՝ շատ հեռու են առողջապահական տարրական պայմաններից և մաքրութեան ու մաքրասիրութեան պահանջներից։

Մի կողմից փողոցների, հրապարակների, գետերի, բազերի ու արտաքնոցների անկարագրելի կեղտը մեր բոլոր քաղաքներում ու գիւղերում, իսկ միւս կողմից մեր թէ գիւղական և թէ քաղաքային ազգաբնակութեան տնային կեանքի հակառողջական պայմանները,—չեն կարող չը նպաստել ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների աջող տարածման։

Թէ մեր քաղաքներն ու գիւղերը անասելի կեղտոտ են,—այդ ճշմարտութիւնը, կարծում ենք, ապացուցութեան կարօտ չէ և մենք աւելորդ էլ ենք համարում այդ մասին խօսելու։ Բայց մենք կուզենայինք ուշադրութիւն դարձնել մեր թէ գիւղական և թէ քաղաքային ազգաբնակութեան տնային կեանքի վերին աստիճանի հակառողջական, հրէշաւոր եղանակի վրա։

Հէնց որ աշունքը գալիս է, գիւղացին փակվում է իր մեծ մասամբ գետնափոր խրճիթում, որտեղ ոչ օդ կայ, ոչ լոյս, և որտեղ նա ձմեռվայ ամբողջ ընթացքում, իր ամբողջ ընտանիքով, իր անասունների դոմի օդն է ներշնչում։ Ամիսների ընթացքում ոչ օդն է փոխվում նրա կեցած ողորմելի բնակութեան մէջ, ոչ լոյսն է մտնում այդտեղ։ Եւ վառելիքը խնայելու համար մեր գիւղացիք տաքանում են բնակութեան ներսված օդով, կամ մինչև անգամ դոմի գարշահոտ մթնոլորդով.... Ոչ թէ միայն մի պատուհան, բայց խրճիթի մի ծակ անգամ աշխատում են ամիսների ընթացքում երբէք չը բացանել, որպէս զի սառն, թարմ օդը չը մտնի բնակութեան մէջ.... Այդ տեսակ ներսված, գարշահոտ, երբէք չը փոխվող օդը ամենալաւ տարածող է ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների.... Զարմանալի չէ, ուրեմն, որ ամեն տեսակ վարակիչ մահաբեր հիւանդութիւնները, մի անգամ ընդ միշտ բուն դրած լինելով մեր գիւղերում, այլ ևս երբէք չեն հեռանում նրանց միջից և տարէն տասն երկու ամիս, մանաւանդ ձմեռվայ ամիսներում, իրանց առատ հունձն են հնձում մեր գիւղական թշուառ ազգաբնակութեան շրջանից....

Գրեթէ նոյն պայմաններում ապրում է և մեր քաղաքային ազգաբնակութեան չքաւոր, խաւար դասակարգը։

Բայց ինչ որ զարմանալի է, այդ այն է որ մեր քաղաքային ազգաբնակութեան ունևոր, նոյն իսկ ինտելիգէնտ դասակարգն էլ, որը չէ կարող արդարանալ նրանով, որ գիւղացու կամ չքաւոր քաղաքացու պէս նիւթական աննպաստ հանգամանքների մէջ է ապրում. մեր քաղաքների ունևոր, ինտելիգենտ դասակարգն էլ, ասում ենք, ապրում է մեծ մասամբ վերին աստիճանի հակառողջական պայմաններում։

Օդը բժշկական գիտութեան մէջ համարվում է ամենաղօրաւոր, ամենագործնական միջոց ամեն տեսակ վարակման դէմ։ Երբ որ մարդը, բայց մանաւանդ ամբողջ ընտանիքը քնած են եղել ամբողջ գիշերը մի փակված բնակարանում, այդ բնակարանի օդը ինքն ըստ ինքեան ներսվում, յայտնի է կոպէկ կառնեմ, ձեզ լաւ հիւրանոց կը տանեմ, էժան է»....

Երիտասարդը չը գիտէր թէ որի հետ համաձայնվի, մանաւանդ որ կասկածում էր, թէ մի գուցէ իրան տանեն որ և է վտանգաւոր կամ անյարմար տեղ, և նրա կասկածը անհիմն չէր։ Այդպիսի անորոշ դրութեան մէջ նա երկար կը մնար, եթէ չը մօտենար նրան մէկ ուրիշ հայ երիտասարդ ասելով, «բարեկամ, դուք հայի էք նմանում»։

—Այո, հայ եմ, պատասխանեց նորեկը, ուրախանալով այդ անսպասելի հարցմունքից։

—Ո՞րտեղից էք եկել։

—Ես գալիս եմ Ե. քաղաքից։

—Կարելի է իմանալ, թէ ինչ գործով էք եկել։

—Ես կլասիական գիմնազիան աւարտել եմ և եկել ուսումս շարունակելու։

—Լաւ, հիմա ուր էք մտադիր իջնելու։

—Ես շուարած եմ, քաղաքին անծանօթ եմ, չը գիտեմ ինչ անել, գնալ սրանց հետ, թէ ոչ։

—Այդ հրէաների հետ լաւ չէ գնալ։

—Ապա ինչ անել։

—Եթէ կամենաք, գնանք իմ սենեակը, ուր այս գիշեր կը մնաք, իսկ վաղը կը հոգանք յարմար տեղ գտնելու։

—Շատ շնորհակալ կը լինեմ։

Երկու երիտասարդները կառք նստեցին, իսկ հրէաները մրթմրթալով հեռացան։

—Դէպի Գերմանական փողոց, հրամայեց քաղաքին ծանօթ երիտասարդը կառապանին. կառապանը սուլելով մտրակեց իր ձիաներին....

II

Նորեկ երիտասարդը Կովկասի Ե. քաղաքիցն էր. նա գիմնազիան աւարտելով թողել էր հայրենիքում այրի մօրը երկու աղջիկներով և չտապել էր դէպի Մոսկվա։ Նրա անունը Հայրապետ էր, իսկ ազգանունը Յովհաննիսեան։ Սրա Մոսկվա գալու նպատակն էր համալսարան մտնել։

Բայց նա ինչու էր կամենում անպատճառ բարձրագոյն գիտութիւն ստանալ, չը նայելով որ իր մայրը և քոյրերը նեղութեան մէջ էին, և իր օգնութեան կարօտ։ Հայրապետը այն երիտասարդներից չէր, որոնք ամեն բան զոհում են յանուն «գիտութեան» և յանուն «գաղափարների»…. բայց նա այն երիտասարդներիցն էր, որոնք ձգտում են իրանց բանը շինել.... և այդ նպատակին հասնելու համար վճռում և գնում են....

Միւս երիտասարդը Ռուբէն Աթանասեան.... Ալէքսանդրապոլից եկած մի ուսանող էր, որը արդէն երեք տարի ուսանում էր Պետրոսեան ճեմարանում։ Սա իր դաղափարներով ու զգացմունքներով Հայրապետի հակապատկերն էր ներկայացնում. սա ազնիւ, մարդասէր, և իդէալիստ էր։

III

Սենեակը մտնելով Աթանասեան դիմեց իր հիւրին ասելով, «փոքր ինչ լուացվեցէք, ես իսկոյն թէյ կը պատրաստեմ, կը խմենք և ապա կը պառկենք քնելու»։ Որովհետև արդէն կէս գիշերից անց էր, և աղախինը քնել էր, ուստի Աթանասեան ինքը գնաց խոհանոց և ապա տեղաշորը պատրաստեց։ Թէյ խմելու ժամանակ Աթանասեան դիմեց նորեկին հարցնելով.

—Ասեցէք խնդրեմ, դուք ո՞ր մասնաղիտութիւնը էք ընտրել։

—Ես համալսարան պիտի մտնեմ, իրաւաբանական ֆակուլտէտը։

—Բայց, չը նեղանաք խնդրեմ հարցնելուս համար,—դուք նիւթապէս ինչպէս էք, ապահովութիւն ունէք....

—Ճշմարիտն ասած, թէև ինձ մի քանի մարդիկ խօսք են տուել, բայց ես նրանց վրա քիչ յոյս ունեմ.... այնպէս որ դեռ իմ վիճակս մասամբ անորոշ է այդ կողմից։

—Քանի որ արդէն եկել էք, սիրտներդ պինդ պահեցէք. ինչպէս ասում են Աստուած ողորմած է....

Դրանից յետոյ երկու երիտասարդները շատ խօսեցին ուրիշ նիւթերի մասին. թէյը վերջացնելուց յետոյ Աթանասեան իր պատրաստ անկողինը Հայրապետին առաջարկելով ասեց.—դուք յոգնած էք, այստեղ քնեցէք, իսկ ինքն մի քանի աթոռներ շարելով՝ իր համար անկողին պատրաստեց....

IV

Միւս օրը Յովհաննիսեան երկար ու բարակ բացատրեց Աթանասեանին, որ ինքն եկել է Մոսկվա առանց որ և է ապահովութիւն ունենալու, յոյս ունենալով միայն որ այստեղ տնային դասեր կը դտնէ, և գուցէ ուսանողների կողմից էլ օգնութիւն կը ստանայ։

«Դասեր դժուարութեամբ կը գտնվեն—պատասխանեց Աթանասեան,—բայց ուսանողներից կարող էք նպաստ յուսալ։ Ի հարկէ, մենք ուսա-

նի աստիճանով ապականվում է և պէտք է զարթնելուն պէս անմիջապէս փոխել գիշերվայ օդը, բաց անել լուսամուտները, ներս թողնելու բնակարանի մէջ առաւօտեան օդի թարմ հոսանքը և կրկնել այդ գործողութիւնը տարէն տասներկու ամիս։ Անցէք վաղ առաւօտեան Շվէյցարիայի մի որ և է քաղաքի փողոցներով,—և կը տեսնէք որ բնակիչները զարթնելուն պէս իրանց առաջին պարտաւորութիւնն են համարում իրանց բնակարանի պատուհանները գոնէ մի կէս ժամով բաց անել, նոյն իսկ ձմեռվայ ամենացուրտ ժամանակ։

Անցէք աշնան կամ ձմեռվայ առաւօտները, երբ ժողովուրդը նոր է զարթնում, Թիֆլիսի ունևոր թաղերի փողոցներով,—և երբէք չէք նկատի, որ փառաւոր տների (որոնց բաղերը մեծ մասամբ սարսափելի կեղտոտ են), դէպի փողոցները նայող մի հատիկ պատուհան անգամ բացվէր.... Բոլորը փակված է մնում ամբողջ օրը, բընակարաններում ամիսներով, առանց փոփոխվելու մնում է նոյն նեխված, ապականված օդը, այդ օդը երբէք չէ թարմանում, չէ նորոգվում,—միայն վառարանները են վառվում, կարծես թէ դա բաւական է օդը մաքրելու համար։

Երբ որ երեք տարի սրանից առաջ մենք մի տարվայ չափ Շվէյցարիայում անցկացրինք, այդ երկրին հարևան երկու երկիրներում, Ֆրանսիայում և Իտալիայում (մասամբ և Աւստրիայում) սարսափելի խոլերա էր տիրում։ Բայց խոլերան չանցաւ Շվէյցարիա, չը նայելով որ այդ երկիրը մշտական յարաբերութիւններ ունենալով իր հարևան երկիրների հետ, հրաժարվեց կարանտիններ անգամ հաստատել իր սահմանների վրա։ Մաքրութիւնը այն աստիճան է Շվէյցարիայում, որ վարակիչ հիւանդութիւնները հազւագիւտ երևոյթներ են այդ երկրում։

Մեր երկիրն էլ, ըստ երևոյթին, Շվէյցարիայի պէս առողջ երկիր պէտք է լինէր, որովհետև նրա պէս լեռնային երկիր է և առողջ լինելու համար բնութիւնից ամեն նպաստաւոր պայմաններով է օժտված.... Բայց այնտեղ որ և է վարակիչ հիւանդութիւն հազւագիւտ երևոյթ է համարվում, իսկ այստեղ ամեն տեսակ վարակիչ, մահաբեր ախտերը սովորական բաներ են ամբողջ տարի։

Զարմ է, որ այդ բոլորի պատճառն այն է, որ Շվէյցարիան մի չը տեսնված տոկունութեամբ հոգում է իր առողջական դրութեան, իր մաքրութեան մասին, իսկ մենք, ընդհակառակն, կարծես գիտակցաբար, ինքներս ենք նպաստում մեզ համար ամենահրեշաւոր, հակառողջական պայմանների ստեղծելուն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՏԻՈՒԹԻՒՆԸ

—

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում չոշափվեց մի հարց, որի վրա ուրիշ անգամ էլ խօսեցած լինելով, կամենում ենք մի քանի խօսք էլ այս անգամ ասել։

Մեր խօսքը դպրոցներում առողջապահութեան դասաւանդման մասին է։

Բացատրել թէ առանց առողջապահութեան թէ բժշկական գիտութիւնն է կորցնում իր նշանակութեան մեծ մասը, և թէ ժողովրդի կեանքը զրկվում է իր բարօրութեան հաստատ հիմքից,—կը նշանակէ կրկնել մի շատ հին ճշմարտութիւն։

Բայց, դժբաղդաբար, ինչպէս ուրիշ հարցերում, այնպէս էլ այս հարցում անհրաժեշտ է կրկնել այդ ճշմարտութեան գործադրելու կարևորութեան մասին, քանի որ մեր հասարակութիւնը, նոյն իսկ մեր մանկավարժական ասպարիզի վրա գործողները դեռ այն դրութեան մէջ են, որ շատ անգամ ըմբռնելով այս կամ այն ճշմարտութեան անհրաժեշտութիւնը, նրա գործադրութեան մասին շատ քիչ են մտածում, կամ եթէ մտածում էլ են, բայց և այնպէս չեն գործադրում։

Դրան ապացոյց այն, որ առողջապահութեան դասաւանդութիւնը մինչև այժմ էլ չը մտցվեցաւ մեր դպրոցներում։ Մենք, ի հարկէ, չենք էլ խօսում մեր տարրական դպրոցների մասին, մեր խօսքը այնպիսի դպրոցների մասին է, որոնք հայոց փոքրաթիւ դպրոցների համար վարժապետներ և ժողովրդի համար հոգևորականներ պատրաստելու կոչում ունեն, ինչպէս են Գէորգեան ճեմարանը, Ներսիսեան դպրոցը և միւս թեմական դպրոցները։

Այդ միջնակարգ դպրոցներում, որտեղից դուրս եկողներն են կազմում մեծ մասամբ մեր դպրոցների վարժապետների և մեր փոքր ի շատէ կրթված հոգևորականների կոնտինդէնտը, ոչ թէ միայն չէ դասախօսվում առողջապահութիւնը, այլ նոյն իսկ այդ առարկան վերջին տարիները հալածված է այդ տեղերից, թէև, ինչպէս հաստատ գիտենք, նա մի ժամանակ աւանդվում էր, թէև գուցէ շատ սահմանափակ կերպով։

Արդեօք ինչ մտածելու է այդ դպրոցները վարչութիւնները այդպիսի մի սխալ քայլ անելով և դուրս գցելով այնպիսի մի անհրաժեշտ առարկայ, ինչպիսին է առողջապահութիւնը,—մենք չը գիտենք. միայն այսքանը կասենք, որ այդպիսի մի քայլ անելու համար մարդ միանգամայն պիտի պատկանի հնացած և փտած այն շիջային, այն տիրացուական կուսակցութեան, որը հերքում է բնագիտական գիտութիւնների կարևորութիւնը ընդհանրապէս և առողջապահութեան դասաւանդութեան օգտաւէտութիւնը մասնաւորապէս։

Թէ Գէորգեան ճեմարանում և թէ Ներսիսեան դպրոցում աւանդվում են մի քանի այնպիսի առարկաներ, որոնք բացի աշակերտներին աւելորդ բեռ լինելուց, ուրիշ ոչինչ օգուտ չեն տալիս նրանց, մանաւանդ դպրոցից դուրս եկած ժամանակ. իսկ մի այնպիսի կարևոր գիտելիք, ինչպիսին է առողջապահութիւնը, որը կարևոր է մանաւանդ ժողովրդական վարժապետի և քահանայի համար,—չէ ընդունված, և գուցէ այժմ էլ աւելորդ են համարում ընդունել մեր միջնակարգ դպրոցների վարչութիւնները։

Ինչ են մտածում նրանք, կամ մի թէ այդ բանը մի նորութիւն են համարում։ Ոչ, դա նորութիւն չէ. ռուսաց դպրոցներն անգամ մտցրել են իրանց ծրագիրների մէջ այդ առարկաները՝ ժողովրդական դպրոցների վարժապետներին, ժողովրդական հոգևորականներին՝ առողջապահութեան հետ ծանօթացնելու համար, որպէս զի դրանք վերջում կարողանան փոքր ինչ նպաստել ժողովրդի առողջապահական հասկացողութիւնների լայնանալուն և նրա կենցաղավարութեան բարւոքմանը։

Այդ ճշմարտութիւնը պէտք է հասկանալ և օր առաջ պէտք է իրագործել մեր դպրոցներում. յուսահատութիւնը միանգամայն աւելորդ է։ Դա է ամենաշլխաւոր միջոցը ժողովրդի կեանքը մի փոքր կանոնաւորելու և ազատելու նրան ամեն տեսակ հիւանդութիւնների զոհ դնալուց, որոնց դէմ բժշկականութիւնը միայնակ ոչինչ էլ չէ կարող անել։

Առողջապահութիւնը բժշկականութեան իդէալն է։

*

ՆԱՄԱԿ ՅԱՐԻՑԻՆԻՑ

—

Նոյեմբերի 27-ին

«Մշակի» ցանկութիւնը կատարվեց։ «Մշակը» իր մէկ համարում ի միջի այլոց ցանկանում էր տեղեկանալ թէ յունվար ամսից լոյս տեսնելի «Մուրճ» ամսագիրը ինչ ուղղութեան պէտք է պահպանի՝ ազատամտական թէ յեսադիմական։ Այժմ թէ «Մշակի» և թէ նրա կարդացողների համար այլ ևս գաղտնիք չէ թէ ինչ ուղղութեան կը հետևէ «Մուրճը», որովհետև «Արձագանք» շաբաթաթերթի № 45-ի մէջ նոյն «Մուրճի» խմբագիր պ. Արասխանեան իր «Երեք տող» դրված ով պարզեց դրօշակը, որի վրա գրված է. «Ես պիտի աշխատեմ հեռու պահել ինձ այն ցեխոտ դաշտից, դէպի ուր ինձ հրաւիրում է Գրիգոր Արծրունին իր վարմունքով».... Աֆֆէրիմ.... Այլ ևս ինչ է հարկաւոր.... Ցան և վեց տարի «Մշակի» քեղմնաւոր, անխոնջ ծառայութիւնը ամբողջ ազգին, առանց խտրութեան կրօնական դաւանութեան, որին միշտ հետևել է «Մշակը» իր ծնված օրից մինչև այժմ, և այդ նոյն ազատամիտ ուղղութեան միջոցով խստապէս քննադատել է այն արմատական վնասակար զաղափարները, որոնք յայտնվել են ժամանակակից պուբլիցիստների կողմից,—այդ գործունէութեան դաշտը կոչվում է «ցեխոտ» դեռ ևս չը ծնված «Մուրճ» ամսագրի խմբագրի բերանով։ Թշուառականները կարծում են, որ եթէ իրանք իրանց գրածը կարդալով գոհ են մնում, ուրեմն ամեն բան վերջացաւ։ Բայց շատ սխալվում էք պարոններ։ Տարիների ընթացքում, «Մշակի» յայտնած մտքերի շնորհով, առաջացաւ մղում դէպի ինքնաճանաչութիւն և նրա ցանած սերմերը այնքան աջողվեցան, որ այժմ արդէն ուշ է, և այլ ևս ոչ ոքին խաբել չէք կարող։ Հիմա մենք գիտենք քամին որտեղից է փչում։ Ապարդէղը բաց է, գործեցէք որքան կարող էք ձեր խաւար մտքերով, իսկ մենք «Մշակ» լրագրի անդրադէտ կարդացողներս և անդիպլօմ աշխատակիցներս, ցաւելով ձեր մոլորութիւնների վրա՝ տոկունութեամբ կերթանք նոյն շաւղով, որը մի անգամ «Մշակի» բաղուկները մեզ համար հարթել են։ Դուք աղաղակում ու օդը թնդացնում էք ձեր խլացուցիչ կոչումներով, թէ «Մշակը» հայհոյում է, «Մշակը» միշտ կրկնում է մի և նոյնը։ «Մշակը» ձեզ անուանում է խաւարամիտներ, յետադէմներ, բուտինականներ և փտածներ. ապա եթէ այդպէս չէք, ինչի էք բարկանում։ Բայց դուք նոյնը համարձակվում էք նրան ասել,—սակայն ձեզ վրա ծիծաղում ենք, որ դուք յանդգնում էք ձեր անունը ուրիշին տալ։

Ա. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Անցեալները քաղաքի ծայրին զինուորական աւելորդ մնացած վառօդը կրակ տուին։ Այդ վառօդը փոխանակ քաղաքի ծայրում փչացնելու, լաւ կը լիներ, եթէ դրանով վայր ձգէին մի ժայռի կտորը, որը գտնվում է հայոց վերին հանգստարանի մօտ ձգված ժայռի վրա։ Այդ հանգստարանից ցած գտնվում է այն ճանապարհը, որը տանում է դէպի քաղաքը, և այդ պատճառով էլ վտանգաւոր է այդ ժայռի կտորը, որովհետև դրա միայն մի շատ փոքր մասն է կպած ժայռին, որով պատած է Շուշու հարաւային կողմը։ Դարձնում ենք ուշադրութիւն դրա վրա»։

—

ԹԱՒՐԻԶԻՑ ստացանք մի, թէև փոքր ինչ ուշացած, նամակ, որը հաղորդում է ի միջի այլոց հետևեալ տեղեկութիւնները. «Մեր դպրոցներն էլ կրիայի քայլերով են առաջ գնում։ Վարժապետներից մէկը օրիորդաց դպրոցում մի աշակերտուհու

նողներս մեծ կարողութիւն չունենք, բայց մեր ապրուստից մի բան յետաձգելով, երբեմն էլ ներկայացումներ կազմելով և սրանց նման միջոցներով կարողանում ենք շատ ու քիչ օգնել աղքատ հայ ուսանողներին, յուսալով որ նրանք էլ մի ժամանակ կօգնեն ուրիշ չքաւոր ուսանողներին։ Ձեր մասին ես կը խօսեմ ընկերներիս հետ և կաշխատեմ, որ ամսական մի որոշ նպաստ նշանակվի ձեզ համար։

Ուսանողական սովորութեամբ Աթանասեանը երկար չը մտածեց. նա ընդունեց անծանօթ երիտասարդին իր մօտ, հաւատաց նրան և վճռեց աշխատել նրա մասին։

Աթանասեան համեմատ իր խոստման տեսնվեցաւ միւս ուսանողների հետ, ծանօթացրեց Յովհաննիսեանին նրանց հետ։ Վերջ ի վերջոյ համաձայնութիւն կայացաւ տալ ամսական 25 ռուբլի նպաստ նորեկ չքաւոր ուսանողին։ Բացի դրանից Աթանասեան և միւսներն էլ ամեն տեսակ բարոյական օգնութիւն հասցնում էին նորեկին։ Աթանասեան կամենալով նրան ծանօթացնել քաղաքի հետ, տարաւ նրան շատ տեղեր, ցոյց տուեց Մոսկվայի բոլոր նշանաւոր տեղերը, մուզէումները, և պատկերահանդէսները, պտտեց նրա հետ քաղաքի չրջակայքը և վերջապէս տարաւ նրան ճնճղուկի լեռները, որտեղից երևում է Մոսկվան իր բոլոր գեղեցկութիւններով, ոսկեփայլ գմբէթներով և սրածայր աշտարակներով, և որտեղից Նապոլէոն առաջինը խնդալով նայում էր այրվող մայրաքաղաքի վրա։ Աթանասեան ծանօթացրեց Յովհաննէսեանին ամեն բանի հետ, և իր պարտքի մի մասը կատարած էր համարում։

Մի քանի ժամանակից յետոյ Յովհաննիսեանը մտաւ համալսարան, իրաւաբանական ֆակուլտետը, և սկսեց ուսանել՝ ստանալով նիւթական օգնութիւն մեծ մասամբ ուսանողներից և նրանց ձեռքի տակ եղած սուղ միջոցներից։

Անցան տարիներ, և Յովհաննիսեանը աւարտեց իր ուսումը....

V

Անցան էլի մի քանի տարիներ։ Բաղդի ծովեզերեայ փողոցում, Միքայէլեան այգու մօտակայքում, ի միջի այլոց կանգնած է մի սիրուն, քարաշէն երկյարկանի տուն, որի ճակատին դրած է Գ. Ս. Ի. տառերը։

«Ո՞վ է բնակվում այստեղ»։

«Գերասիմ Սէրգէյիչ Իվանով», պատասխանում են ձեզ։ Այդ Իվանովը մէկ յայտնի հայ իրաւաբան է։

Այն օրից, երբ Հայրապետ Յովհաննիսեանը դարձաւ Գերասիմ Իվանով,—նա շատ փոխվեց. որպէս զի իմանայիք թէ նա ինչ ազդիցն է, պէտք է հարցնէիք, որովհետև նրանից և ոչ էլ նրա տանը մի բան հայերէն չէր լսվում և ոչ էլ նրա գործերից կարելի էր իմանալ, թէ արդեօք հայ է նա, թէ մի ուրիշ ազգից։

Այդ Գերասիմը—գիտէք,—մեր չքաւոր ուսանող Հայրապետն է։

Բաղդ դալով մեր հերոսը ամուսնացաւ Աստրախանցի մի հարուստ աղջկայ հետ։ Կապեր կապելով զանազան դիրք ունեցող անձինքների հետ, նա իր գործերին աջող ընթացք տուեց. նա վճռեց անուն հանել և հարստանալ, և հարստացաւ.... բայց անցեալը մոռացութեան տուաւ....

Նրա մտքից դուրս եկաւ այն ուսանողութիւնը, որը նրան քաջալերեց և միջոց տուեց համալսարանը աւարտելու։ Օգնել մի աղքատ ուսանողի, կամ առհասարակ օգնել կարօտ մարդկանց,—նա վաղուց չէր հասկանում թէ ինչ բան է...

Երբ երեկոյեանները հարուստ փաստաբանը իր գեղեցիկ կնոջ հետ նստում էր փողոցի կողմի պատշգամբի վրա, և նայում էր դէպի Կասպից ծովը, ուր լուսինը իր ճառագայթներով խաղում էր ալիքների հետ, ուր չոգենաւը ծանր ծանր հեռանում էր ափից, ուր փոքրիկ նաւակները վազվզում էին ալիքների հետ կռւելով, և ուր հօրիզոնից չարժական փարոսը մերթ հանգչում էր և մերթ վառվում, նա զգում էր, և շատ լաւ էր զգում որ ինքը բաղդաւոր է և ուրիշ ոչինչ.... Այդ բաղդաւորութեան մէջ նա անբաղդութիւն չէր յիշում։ Ուրախ կեանքը նրան մէջից չէր տալիս գոնէ երբեմն երբեմն յիշելու այն երիտասարդութիւնը, որը նա անցկացրեց հեռու համալսարանական քաղաքում....

Կեանքը անցնում էր ուրախ և անվրդով։ Եւ այդ անվրդով կեանքի ուրախ առաւօտներից մէկ առաւօտ նա ստացաւ մի նամակ....

VI

«Պարոն Յովհաննիսեան—գրում էին նրան ուսանողները,—վերջապէս զարթնեցրէք ձեր քնած խիղճը, քանի անգամ և մինչև երբ պէտք է գրենք ձեզ։ Տարիների ընթացքում ուսանողական ընդհանուր ոյժը ձեզ նպաստել է, իսկ դուք չէք մտածում, որ ձեզանից յետոյ ձեր նման չքաւոր ուսանողներ շատ և շատ կան։ Մի թէ նրանց օգնութիւն պէտք չէ... Մի թէ դուք էիք միայն արժանի օգնութեան... Բաւական է վերջապէս այդքան սառնասիրտ լինել... ի վերջոյ եթէ դուք, պարոն, հաստատ վճռել էք երեխատուն լինել, գոնէ որպէս իրաւաբան, հասկացէք և բոլորը մի կողմը թողնելով, վճարեցէք գոնէ այն յիսուն ռուբլին, որ դուք ճանապարհ ընկնելիս ձեռապարտ էք վերցրել, խոստանալով վերադարձնել։ Խնդրում ենք չը վիրաւորվել այս նամակից, որովհետև պատճառը ինքներդ էք. քանի անգամ ձեզ նամակ է գրվել, բայց դուք մինչև անգամ անպատասխան էք թողել....»

VII

Նամակը կարդալուց Գերասիմ Սերգէյիչը յօնքերը կիտեց, ձեռքով խփեց սեղանին.... և ապա ժպտալով, վերցրեց գրիչը և ռուսերէն գրեց հետևեալ պատասխանը.

«Պարոններ, ձեռք վերցրէք ինձանից։ Ես ձեզ լաւ եմ ճանաչում... Ես չեմ էլ կամենում որ և է յարաբերութիւն ունենալ ձեզ նման Դոն-Քիշոտների հետ... Ի՞նչ էք զառանցում, և երևակայում. ինձ մնում է միայն ցաւել ձեզ վրա, և դրա հետ միասին վերջին անգամ պահանջում եմ, երբէք ինձ չը դիմել. այդպիսի պարտքերը չեն հատուցանվում, ես այդ ձեզանից լաւ գիտեմ։ Այդ է իմ վերջնական պատասխանը և եթէ դուք կը շարունակէք ինձ անհանգստացնել, ես ուրիշ միջոցների կը դիմեմ։»

Միթէ ճիշտ չէ ասել բանաստեղծը, «Թքել եմ քու ալ, ուսմանդ ալ վրան»։

Թ—ց.

այնպիսի մի ապտակ է տուել, որ աշակերտուհու երեսը ուռել է։ Այդպիսի դէպքերից ժողովուրդը սառչում է դպրոցից. նորերս մի քանի աշակերտներ դնացին բողոքականների դպրոցը։ Սրբազանը նորերս գտնվում էր Սալմաստ քաղաքում. այնտեղից պիտի դնար Ուրմի և պտտելու է Ատրպատականի հայաբնակ քաղաքները և գիւղերը։ Ատրպատականում բացի «Արամեան» դըպրոցից ուրիշ մի դպրոց չը կայ։ Այս մասին էլ ոչ ոք չէր մտածում. օրինակ Մարաղայ քաղաքը քանի տարի էր, որ առանց դպրոցի էր. այս տարի միայն մի ուսուցիչ ուղարկվեցաւ։ Ցիշեալ քաղաքի բուն հայ բնակիչները մինչև անգամ իրանց մայրենի լեզուն չը գիտեն. տնային գործածական լեզուն պարսկերէնն է։ Բայց այս տարի Թաւրիզից գաղթած մի քանի պարոններ հասկանալով ուսման նշանակութիւնը, իրանցից հոգաբարձուներ են ընտրել, որոնք Թաւրիզից մի ուսուցիչ տարան, որ այժմ սովորեցնում է այնտեղի թշուառ մանուկներին։ Ինչ կը լիներ, որ արդարիլաբնակ հայերը օրինակ առնէին Մարաղայի հայերից։ Ցորենը այս տարի այստեղ շատ էժան չէր. լիտրը ծախվում է 50—60 կոպ., խաղողը 50—55 կ., նուշը 7 դրան, ընկոյզը մի դրան։ Իսկ բաղարի մրգեղէնը բաւական էժան էր»։

—

ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՅԻՑ մեզ գրում են նոյեմբերի 28-ից հետեւեալը. «Դարաչիչագ գաւառամասի գինուորակոչական ատեանը սկսեց իր գործունէութիւնը ամսիս 23-ին։ Զորեքշաբթի դեռ վաղ առաւօտեան, գինուորակոչական ատեանի կարգադրութեամբ Դարաչիչագի ամբողջ ժողովուրդը խումբ-խումբ շտապում էր Ծաղկաձորի բարձրաւանդակ ճանապարհներով դէպի ատեանի դուռը։ Այնտեղ Ծաղկաձորումն էր կատարվում գինուորակոչական վիճակահանութիւնը, որովհետև Ծաղկաձորում կային արքունի դատարկ շատ դատարաններ և տներ, թէ ատեանի համար պատշաճաւոր տեղեր և թէ պաշտօնատար անձինքների համար արձակ բնակարաններ։ Գինուորակոչական ատեանը, եկեղեցական ծիսակատարութիւնից յետոյ, սկսեց բողոքների ընդունելութիւնը, որը վերջացաւ միւս օրը, ապա ժամի 3-ին սկսվեց վիճակահանութիւնը։ Առաջ վիճակահանութեանը հրաւիրվեցան մալականների և յոյների գինուորացու երիտասարդները, (7 գիւղ մալական և մէկ գիւղ յոյն է), որոնք թւով 20 հոգի էին, և որոնցից, կանոնադրութեան համեմատ, որոշվեց երկու հոգի գինուոր վերցնել։ Միւս օրը վիճակահանութեան պատրաստվեցան նաև հայ գինուորացուները, որոնք թէև թւով շատ էին, բայց միայն 288 հոգի ենթարկվեցան վիճակահանութեան, որոնցից որոշվեց 35 գինուոր և 6 կանդիդատ։ Այս բոլորից յետոյ գինուորները չափսի ենթարկվեցան և յետոյ երդում ընդունելով, ամեն մի հասարակութեան պատկանող գինուորները, իրանց տանուտէրերի երաշխաւորութեանը յանձնվելով, իրանց տները արձակվեցան, այն պայմանով, որ դեկտեմբերի 9-ին դարձեալ ներկայանան գինուորակոչական ատեանին։ Գինուորներից, թէ հայերից և թէ մալականներից կան ամուսնացած երիտասարդներ և ունեն 1—2 մանուկ երեխաներ»։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են. «Արմաւիրի հայը, որը մի ժամանակ բացի լեռնական չէրքէզների սովորութիւնից ուրիշ բան չը գիտէր, այլ միայն յիշում էր թէ ինքն հայ է և քրիստոնեայ, չը գիտէր մի բառ անգամ հայերէնից,—այժմ հետաքրքրվում է իր ազգային լեզուով, հոգում է իր դպրոցների մասին, ուրախութեամբ յաճախում է թատրոնասէրների հայերէն ներկայացումները։ Այստեղ երկսեռ դպրոցների ուսուցիչների և վարժուհիների մէջ նորերումս միտք յղացաւ հիմնել դպրոցներին կից մի գրադարան։ Եւ ահա յօգուտ այդ գրադարանի տրվեցան թատրոնական ներկայացումներ հոկտեմբերի 14-ին և նոյեմբերի 23-ին։ Այդ ներկայացումներից մնաց զուտ գումար 100 բուբլի։ Ներկայացումները դարձեալ մի քանի անգամ կը կրկնվեն։ Եթէ թատրոնական դահլիճը այդքան փոքր չը լինէր, եկամուտը կըրկնապատիկ կը լինէր։ Զը նայելով վատ եղանակին, ժողովուրդը մեծ ուրախութեամբ յաճախում էր թատրոնը և շատերը զրկվեցան ներկայացումներից տոմսակ չը լինելու պատճառով»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են, որ նոյեմբերի 27-ին, կիրակի գիշերը, անյայտ չարագործները կոտրելով Գօրու Ս. Ստեփաննոս հնաշէն եկեղեցու լուսամուտի երկաթէ վանդակները, մտել են եկեղեցի և տարել են մինչև 2,300 բուբլի արժողութեամբ այլ և այլ արծաթեայ իրեղէններ։ Չարագործները, ինչպէս երևում է, դեռ գտնված չեն։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ ստացանք Ժամհարեան եղբայրներից 20 բուբլի, որպէս զի այդ փողով եկող տարի «Մշակի» երկու համարները ուղարկենք ում կամենում ենք։ Այդ համարներից մէկը կը յատկացնենք, որպէս նուէր Ժամհարեանց եղբայրների կողմից, Ելիսավետպոլի նահանգի Բանանց գիւղի հայոց դպրոցին, իսկ երկրորդ համարը Թիֆլիսի դպրոցներից մինի հայ աշակերտներին։

—

Դեկտեմբերի 2-ին, դիշերը, առաջին անգամ այս տարվայ ընթացքում, ձիւն եկաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Ձիւնը թէև սաստկութեամբ էր գալիս, բայց մնում էր միայն քաղաքի շրջակայ սարերի վրա, իսկ փողոցներում անմիջապէս հալվում էր։ Ձիւնը շարունակեց գալ դեկտեմբերի 3-ին և 4-ին։

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յայտնում է կենսական մթերքների վրա հետեւեալ տակսա, որը զօրութիւն պիտի ունենայ դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը։ Կրուպչատկա ալիւրից թխած հացի փունտը արժէ 5 կոպէկ, ցորենի ալիւրից առաջին տեսակի՝ $3^1/_2$ կ., երկրորդ տեսակի՝ 3 կ., նոյն ալիւրից տեղական թխոնրում թխած հացի փունտը, առաջին տեսակի՝ 5 կ., երկրորդ՝ 4 կ., երրորդ $3^1/_2$ կ., կրուպչատկա ալիւրից խառն ցորենի ալիւրի հետ թխած լաւաշների փունտը, առաջին տեսակի արժէ 5 կ., երկրորդ՝ 4 կ։ Ցաւարի մսի փունտը առաջին տեսակի արժէ 8 կ., երկրորդ՝ 7 կ., սուկի 14 կ., ոչխարի մսի փունտը 8 կ., խոշի մսի փունտը, առաջին տեսակի 8 կ., երկրորդ 7 կոպէկ։

—

Ստացանք 20 բուբլի ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, պ. Յովհաննէս Գէորգեան Կիտայեանցից, յօգուտ Բաքիի դրքերի հրատարակութեան։

—

Պ. Յովհաննէս Գէորգեան Կիտայեանց, Աստրախանից ուղարկել է մեր խմբագրութեանը 20 բուբլի, որպէս զի այդ փողով ուղարկենք «Մշակի» երկու օրինակ արտասահմանի հայ ուսանողներին։ Այդ փողով պ. Կիտայեանցի անունից կուղարկենք մեր լրագրի մի օրինակ Ցիւրիխի, իսկ միւսը Ժընէվի ուսանողներին։

—

Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում Կովկասեան փոխարքայի Նախկին օդնական, այժմ պետական խորհրդի անդամ, իշխան Սվեատօպոլկ-Միրսկի։ Նա իջել է պալատում և այստեղ կը մնայ մօտ երկու շաբաթ։

—

Կրկին յանկարծակի մահուան դէպք. դեկտեմբերի 2-ին յանկարծամահ եղաւ Թիֆլիսեցիներին լաւ ծանօթ Սօլոմոն Շաբուրով, որը երբեմն բաւական մեծ, մինչև կէս միլիոն, կարողութիւն ունէր, բայց մեռնելով, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, թողեց մի շատ մեծ ընտանիք, և.... 85 կոպէկ առձեռն փող։

—

Թիֆլիսի քաղաքային ուսումնարանական յանձնաժողովի վճռով, կոմս Լօրիս-Մելիքովի անունով հիմնված քաղաքի թոշակաւորներից մէկը նշանակված է Մոսկվայի համալսարանի ուսանող Աբգար Թօխաթեանն։

—

Դեկտեմբերի 2-ին Թիֆլիսի օպերային թատրոնում նշանակված էր «Կալաշնիկով» օպերան, բայց նոյն իսկ ներկայացման սկզբին միայն յայտարարելով՝ այդ օպերայի փոխարէն խաղացին «Ֆաուստը»։ Հասարակութեան մեծ մասը դժգոհ մնալով այդ բանից, յետ գնաց։ Անկարելի է չը նկատել, որ մի օպերայի տեղ միւս օպերա ներկայացնելը, պատճառ բերելով երգիչների հիւանդութիւնը (?) մի սովորական բան է դարձել օպերային թատրոնի կառավարիչների համար։ Եթէ այդ բանը պատահէր երկու, երեք, հինգ անգամ,—այդ դեռ ոչինչ,—բայց, ինչպէս երևում է, հասարակութեան գլխին այդ տեսակ խաղ խաղալը մի չնչին բան են համարում օպերայի կառավարիչները, և այդ պատճառով հասարակութիւնը ստիպված է լսել ոչ թէ այն օպերան, որի համար փող է վճարում, այլ այն, որի համար դուցէ մարդիկ իրանց տնից անգամ չէին կամենայ դուրս գալ։ Դա ներելի վարմունք չէ....

—

Ներկայումս մի հայ երիտասարդ, Շահլամեան ազգանունով, բաւական ընդունելութիւն է գտել Պետերբուրգի երաժշտական շրջաններում իր ձայնով։ Պ. Շահլամեան դեռ այստեղ և գաւառական քաղաքներում եղած ժամանակն էլ ցոյց էր տալիս, որ կարող է առաջ գնալ եթէ մշակէր իր ձայնը։ Մի քանի տարի է արդէն, որ նա Պետերբուրգումն է։ Դեկտեմբերի 10-ին Պետերբուրգի քաղաքային կրեդիտական ընկերութեան դահլիճում մի կօնցէրտ պիտի տրվի, որին պիտի մասնակցի, իբրև սիրող և պ. Շահլամեան։ Այդ առիթով «Новости» լրագիրը ասում է հետեւեալը. «Պ. Շահլամեան օժտված է բնութիւնից զարմանալի տենօրով, որը ունի ահագին ընդարձակութիւն և հաճելի տեմբր։ Այդ երիտասարդ երգիչը Կայսերական թատրոնների վարչութեան հաշուով շուտով պիտի ուղևորվի Նեապոլ՝ կատարելագործվելու, և այդ առիթով չէ կարելի անկեղծ սրտից չուրախանալ, ըստ որում պ. Շահլամեան, իր ընդունակութիւնների շնորհով, վերջում կարող կը լինի երգել ոչ թէ միայն քնարական, այլ և դրամատիական այնպիսի դերեր, ինչպէս են Վասկո-դը-Գամա, Արնօլդ, Ռոբերտ, և այլն»։ Ցանկանում ենք մեր կողմից կատարեալ աջողութիւն հայ երգչին։

—

Մեզ հաղորդում են, որ պ. Սարդսեան, «Գուլեցոց բարբառը» անունով գրքի հեղինակը, պատրաստում է մի նոր աշխատութիւն հայոց նոր լեզուի ուսումնասիրութեան վերաբերութեամբ, որը մօտիկ ապագայում լոյս կը տեսնի։

—

Մեր տպէտ ամբոխի վատ սովորութիւնը, ինչպէս երևում է, ուղղակի կերպով տարածում է քաղաքի մէջ ծաղիկ հիւանդութիւնը անարգել կերպով։ Քաղաքի ազգաբնակութեան աղքատ դասակարգի մէջ բոլորովին սովորութիւն չը կայ որ և է զգուշութիւն ձեռք առնել, երբ տան մէջ ծաղիկով հիւանդ կայ։ Հիւանդի մօտ անարգել ել ու մուտ ունեն ոչ թէ հասակաւոր, այլ նոյն իսկ երեխաները։ Ծաղիկով հիւանդի մօտ ընդհանրապէս աշխատում են շատ մարդիկ լինել, որպէս զի հիւանդը ուրախ անցկացնի ժամանակը և չը զգայ իր հիւանդութեան ծանրութիւնը։ Հարևանները շարունակում են այդպիսի դէպքերում միմեանցից ման, ջուր, կերակուր և այլ իրեղէններ փոխ առնել։ Եւ այդ դեռ բաւական չէ. ծաղիկով հիւանդի մեռած ժամանակն էլ նրա շորերը կամ տալիս են չքաւոր հարևանների երեխաներին, որով ուղղակի հիւանդութիւնը փոխում են ուրիշների վրա, և կամ վաճառում են հին շորեր առնող մարդկանց, որոնք ինչպէս յայտնի է, տնէ տուն մտնելով այդ տեսակ շորեր առնում, և այդ նոյն շորերը ուրիշների վրա վաճառելով «ամենայն աջողութեամբ» զանազան տարափոխիկ հիւանդութիւնները մի թաղից միւս թաղը, մի տեղից միւս տեղն են տեղափոխում... Այդպիսի դրութեան մէջ, ի հարկէ, մեր քաղաքի նման քաղաքներում, տարափոխիկ հիւանդութիւնները կը տարածվեն և զոհեր կը տանեն....

—

Փարիզից հեռագրում են, նոյեմբերի 27-ից (դեկտեմբերի 9-ից) մայրաքաղաքի լրագիրներին, որ Ֆրանսիական ճեմարանի անդամ Վ. օգիւէ նոյեմբերի 26-ին կարդաց մի հետաքրքիր դասախօսութիւն Սամարկանդում և Միջին-Ասիայում քաղաքակրթութեան տարածելու մասին։ Դասախօսը ըստ կարգում մի ընդհանուր տեսութիւն արեց Ասիայի և Եւրոպայի սկզբնական յարաբերութիւնների մասին և կանգ առաւ այն բանի վրա, թէ ինչպէս առաջ գնաց Ռուսաստանը դէպի Միջին-Ասիա՝ սկսած Պետրոս մեծի օրերից մինչև այն օրը, երբ Թամերլանի հին քաղաքը մուտք գործեց առաջին չոգեմեքենան։ Ապա դասախօսը մատնանիշ արեց Միջին-Ասիայում կատարված երկաթուղու մեծ նշանակութեան և Ռուսաստանի գաղթական շարժման վրա։ Դասախօսին բազմաթիւ հասարակութիւնը ծափահարել է մեծ ոգևորութեամբ։

—

Ռուսաց դրամատիական գրողների ընկերութիւնը, ինչպէս հաղորդում են Մոսկվայի լրագիրները, դիմել է ներքին գործերի մինիստրութեան, թոյլատրութիւն խնդրելով՝ հանգանակութիւն բանալու՝ որից գոյացած գումարով ցանկութիւն կայ արձան կանգնեցնելու Երևելի ռուս թատերագրող Օստրովսկու յիշատակին։

—

Պարսկաստանի հետ ծագած տարաձայնութիւնների հարցը մանրամասնաբար քննելու համար, Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են այդտեղի լրագիրները, կազմված է մի առանձին յանձնաժողով, նախագահութեամբ պետական խորհրդի անդամ Աբազայի։

—

Արևելքի կեանքը և ժողովուրդներին ուսումնասիրելու նպատակով Պետերբուրգում հիմնվում է մի ամսագիր՝ «Россія и Востокъ» («Ռուսաստան և Արևելք») վերնագրով, խմբագրութեամբ պ.պ. Ելիսէեվի և Սուբբոտինի։

—

Դրականապէս վճռված է դալ տարվանից մեծացնել սահմանագլուխների պահապանների թիւը։ Դրա համար, ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, որոշված է տալ 432 հազար բուբլի։

—

Ցիշում են անկասկած ընթերցողները, որ այս ամառ Մոսկվայի համալսարանի մի քանի ուսանողներ, ի միջի այլոց և ռուսաց Աշխարհագրական ընկերութեան անդամ-աշխատակիցներ՝ պ.պ. Մարկով և Կովալեվսկի, Արարատ սարը բարձրացան։ Այժմ դրանք ներկայացրել են Աշխարհագրական ընկերութեանը իրանց ճանապարհորդութեան մանրամասնութիւնները, հաղորդելով թէ իրանց դիտողութիւնները և թէ բարձրութիւնների վրա ձեռք բերած տեղեկութիւնները։ Ընկերութեան մօտիկ ժողովներից մէկում, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, պ.պ. Մարկով և Կովալեվսկի պէտք է զեկուցում անեն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Ծաղկի հիւանդութիւնը շատ մեծ կոտորած է անում և Հայաստանի մի քանի կողմերում։ Ահա թէ ինչ են գրում Բաղէշից այդ մասին. «Ծաղկի հիւանդութիւնը կը շարունակէ խաղալ իւր անագորոյն դերը հետզհետէ առաւել կատաղութեամբ։ Այս համայնաճարակ ախտի զոհերու միջին հաշուով օրական թիւը օր աւուր կը բարձրանայ։ Ծաղիկէն բռնուող անմեղ մանուկներ և չափահաս պատանիներ 3,000-էն աւելի կը հաշուին։ Արդարև 25,000 բնակիչ ունեցող քաղաքի մը համար մեծ և անդարմանելի է այս կորուստ և բնականաբար առաւել դառն եթէ չարունակուի տակաւին։ Այդ հիւանդութեան ենթարկուողներէ ոմանք միականի և այլք բոլորովին զուրկ տեսութենէ կառողջանան՝ դառնալով իրայնոց անմոռաց և մշտնջենական վիշտ»։

«Արևելքի» մէջ կարդում ենք հետեւեալը. «Սոլթանը՝ Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյի շնորհած երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշանի առթիւ տուած կայսերական Պէրաթին մէջ՝ Լուսինեան մականունամբ յիշած է Խորէն Սրբազան և կը լսենք թէ Ն. Գերապատուութիւն այսուհետև Լուսինեան մականունը պիտի գործածէ»։

Կ. Պոլսի նորընտիր պատրիարքի պաշտօնը շնորհաւորելու համար, ի միջի այլոց Պատրիարքարան է եկել նոյեմբերի 21-ին և Կ. Պոլսի հրէաների խախամապետը, և պատշաճաւոր կերպով ընդունվել է Պատրիարքարանում։

Նոյեմբերի 22-ին Խորէն պատրիարքը փոխադարձ այցելութիւն է տուել հայ հռոմէականների Պատրիարք Ազարեանին։ Ընդունելութիւնը եղել սիրալիր։

Նոյեմբերի 24-ին Խորէն Պատրիարքը այցելութիւններ է արել պետութիւնների դեսպաններին. և ահա թէ ինչ են հաղորդում այդ մասին Կ. Պոլսի լրագիրները. «Խորէն Ս. Պատրիարք Հայրն այցելութիւն տուաւ այն դեսպանաց որոց թարգմանք Պատրիարքարան եկած էին արդէն ի շնորհաւորութիւն։ Ն. Ամենապատուութիւն՝ նախ և առաջ գնաց ռուսական դեսպանատունն ուր սիրալիր կերպիւ ընդունուեցաւ Պ. Նէլիտօֆի և առաջին թարգման Պ. Իվանոֆի կողմէ։ Ռուսիոյ դեսպանին հետ քառորդ ժամու տեսակցութենէ մը յետոյ, Ս. Պատրիարք Հայրն այցելեց Ֆրանսական դեսպանատունը. Մոնդէպէլլօ կոմսն արձակուրդով բացակայ գտնուելով մայրաքաղաքէն, դեսպանատան գործակատար Պ. Էմպէռ ընդունեց Ն. Ամենապատուութիւն և սիրալիր ընդու-

նելութիւն մ՚ընելով յայտնեց թէ պիտի փութայ իւր դեսպանին հաղորդել ի Բարլին, Հայոց Պատրիարքին այցելութիւնը։ Ցետոյ գնացին անգլիական դեսպանատունն ուր ընդունեցան Սըր Ուիլեէմ Հուայթի և երկրորդ Թարգման Գ. Մարինիչի կողմէ։ Քառորդ ժամու տեսակցութենէ մը յետոյ, Ս. Պատրիարք Հայրն հրաժեշտ կառնուր, սակայն Մեծին Բրիտանիոյ դեսպանին հրաւիրանօք, Ն. Սրբազնութիւն քառորդի մը չափ ևս նստաւ։ Աւստրիական դեսպանատան մէջ ևս, ուր այցելեց Ս. Պատրիարք Հայրն և սիրալիր կերպիւ մեծարուեցան Պարոն տը Քալիչէի կողմէ. յետոյ գնացին գերմանական դեսպանատունը, սակայն Գ. տը Րատովից բացակայ լինելով, Ս. Պատրիարքն իւր այցետոմսը թողուց և մեկնեցաւ»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Պետերբուրգում լոյս տեսաւ ռուս գրող Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի «Монахъ» (Աբեղայ) վերնագրով րօմանը, որը յատկապէս նուիրված է վանական կեանքին։ Այդ կեանքին նուիրված գրքեր ռուսաց վիպական գրականութեան մէջ շատ քիչ կան։

***

Էմիլ Զօլայի վերջին «Un réve» (Ցնորք) վերնագրով րօմանը, ինչպէս գրում են փարիզի լրագիրները այնքան էլ աջողութիւն չունեցաւ, որովհետև $2^1/_2$ ամսվայ ընթացքում լոյս է տեսել միայն 27-որդ հրատարակութեամբ։ Փարիզում այնքան կարճ միջոցում 27-որդ հրատարակութիւնը «այնքան էլ աջող» չէ համարվում։

Ի՞նչ կասէին Փրանսիացիները, եթէ իմանային որ հայոց գրականութեան մէջ ամենալաւ գրուածները 5 տարվայ ընթացքումն էլ երկրորդ հրատարակութիւն չեն ունենում։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 դեկտեմբերի։ Սնանկ յայտնված Օվսեանիկովի գործերի համար հիմնված է կօնկուրսային վարչութիւն՝ երդուեալ հաւատարմատար Դօրնի նախագահութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 2 դեկտեմբերի։ Օսման-Դիգմա հաղորդեց Սուակիմի մօտ գտնվող անգլիական գեներալ Գրէնֆէլին, որ հասարակածային նահանգը անձնատուր եղաւ Մագդիականներին և որ Էմին-փաշան գերի է մնացել Մագդիականների ձեռքում Սլէնլիի հետ միասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 դեկտեմբերի։ «Новое Время» հաստատ աղբիւրից հաղորդում է, որ Պարսկաստանը յետ է վերցրել իր մերժումը՝ Մէշհէդի մէջ հիւպատոսին ճանաչելու վերաբերութեամբ, և այդ պաշտօնը ստանձնելու համար գնում է Ռուստի այժմեան հիւպատոս Վլասօվ, և որ բոլոր շանսերը այն կողմումն են, որ Պարսկաստանի հետ ունեցած տարաձայնութիւնների միւս կէտերի վերաբերութեամբ ևս աջող հետևանք կըստացվի, թէև չօշափած հարցերի էական մասը կը պահանջի աւելի երկարատև բանակցութիւններ։

ԴԱՐՄՇՏԱԴՏ, 3 դեկտեմբերի։ Այսօր վախճանվեց Հէսսէնի պրինց Ալէքսանդր։

ՍՏՕԿՀՕԼՄ, 3 դեկտեմբերի։ Շվեդիայի թագաւորը Ֆրանց-Յովսէփին նշանակեց շվեդական զօրաբանակի գեներալ։

ՓԱՐԻԶ, 3 դեկտեմբերի։ Մինիստրների խորհուրդը հոգում է Պանամայի ջրանցքի աշխատանքները պահպանելու մասին։ Պանամայի ընկերութիւնը լուծվում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 դեկտեմբերի։ Երէկ պետական խորհրդի ընդհանուր ժողովում սկսվեց գեմստվօների գլխաւորների վերաբերեալ նախագծի քննութիւնը։—Երէկ կազանի տաճարում տեղի ունեցաւ յայտնի չեխ հրապարակախօս Սկրէյշօվսկու ողջախաւութիւն ընդունելը։ Կնքահայրը կոմս Իգնատիեվն էր։

ՓԱՐԻԶ, 4 դեկտեմբերի։ Պատգամաւորների ժողովը մերժեց կառավարութեան առաջարկութիւնը՝ օգնելու Պանամայի ջրանցքի սնանկացած ընկերութեանը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Դեկտեմբերի 2-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	— ր.	98	»
Համբուրգի վրա 100 մարկ — . .	48 »	15	»
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	— »	—	»
Ոսկի — արժէ — . .	7 »	82	»
Մաքսային կուպօններ — . .	155 »	75	»
Արծաթ — — — . . .	1 »	18	»
Բօրսային դիսկօնտներ — . .	$6^3/_4$ և	$7^3/_4$%	»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	98 »	25	»
— — — — 2-րդ —	97 »	75	»
— — — — 3-րդ —	97 »	50	»
— — — — 4-րդ —	97 »	87	»
— — — — 5-րդ —	97 »	87	»
— — — — 6-րդ —	— »	—	»
Նոր 4% փոխառութիւն.	81 »	87	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	97 »	50	»
— — 2-րդ —	97 »	50	»
— — 3-րդ —	97 »	25	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	272 »	75	»
— երկրորդ —	242 »	50	»
$5^1/_2$% րէնտա	102 »	12	»
Ոսկեայ րէնտա.	177 »	50	»
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	150 »	—	»
Նոր երկաթուղային րէնտա . . .	98 »	—	»
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	— »	—	»
— — թղթադ. .	91 »	37	»
Գրաւ. թղ. Ազնու. բանկի . . .	97 »	87	»
$5^1/_2$% գրաւական թղթեր Խերսօնի կալուած բանկի.	97 »	50	»
6% գրաւակ. թղ. Խարկօվի կալ. բան.	99 »	75	»
— — Պօլտավայի — —	100 »	50	»
— — Պետ.Տուլսկ. — —	100 »	—	»
— — Կիեվի — —	100 »	50	»
— — Մօսկվայի — —	101 »	—	»
— — Բեսարաբ. Տավր. —	99 »	75	»
— — Նիժ. Սամար. —	100 »	—	»
— — Վիլնայի —	99 »	—	»
— — Թիֆլիսի—72 և — տ.	97 »	—	»
— — Քութայիսի-18 և — տ.	97 »	—	»
Վօլժսկօ-Կամսկի բանկի ակցիաները	680 »	50	»
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	239 »	—	»
Րիբինսկ-Բօլօգօվի ընկ.	84 »	—	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	92 »	37	»
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	91 »	75	»
Օդեսայի — — .	92 »	62	»
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	81 »	—	»

Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը ամուր է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

ՍՈՒԽՈՒՄ. Ս. Ֆ. Ստացանք։ Ուրախութեամբ կը շարունակենք ուղարկել։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ВѢНСКІЙ МАГАЗИНЪ

ԵՂԲ. Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Մղիվանիի տանը, առաջին կլասիկական գիմնազիայի դիմաց

Դ Է Պ Օ

Մարդկանց և երեխայոց պատրաստի հագուստներ։

Ստացել ենք մօտ օրերս զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի։ Գները՝ ամենամատչելի և ձեռնտու են։

II ՊԱՀԵՍՏԸ գտնվում է եղբ. Աբովեանների տանը № 1, 2, 3 և 4, Ալէքսանդրեան այգու դիմաց։

Եղբ. Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐ



ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

Ժամացոյցների մագազինում Գոլովինի այգու դիմաց, անկիւնի մագազինը։

Ամեն տեսակ ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷ, ԼՈՐՆԷՏՆԵՐ և ՋԵՐՄԱՉԱՓԵՐ

Տրվում են ճշգրտութեամբ պ.պ. բժիշկների կարգադրութեան համեմատ, նոր մետրիական և նախկին դիւյմային սիստեմայով։

Կարկատվում են ակնոցները և նոր ապակիներ են դրվում։

ԳՆԵՐԸ ԱՄԵՆԱՉԱՓԱՒՈՐ ԵՆ։ 1—6 (Ե)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Ազնեան՝ փոքրադիր օրացոյց.		10 կոպ.
„ Հարիւրով առնողներին . . .		7 „
„ Պատի օրացոյց.	1 րուբ.	„ „
„ Ճանապարհի ծախսով. . . .	1 „	25 „
Տէր-Աբրահամեանի օրացոյց.		15 „
„ Գումարով առնողին.		12 կոպ.

2—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ

ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է։

Միանուագ քանից աւելի գնողին զիջումն կը լինի։

Վաճառվում է ԲԱՅԱՌԱԳԷՍ Խիդիկէլի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօլօվինսկի Պրօսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ։ 20—40

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦРУНИ.

Դվօրցօվայա փողոց ՆԱԽԿԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քարավանսարայում

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՏ

Տղամարդկանց և կանանց ճերմակեղէն։

Սպիտակեղէնն օժիտի համար 100 րուբլուց մինչև 5,000 րուբլի գնով պատրաստ է միշտ մեր մագազինում։

Իսկ 5,000 րուբլուց մինչև 10,000 րուբլու գնով սպիտակեղէնն օժիտի համար պատուէր ենք ընդունում, որը և կատարում ենք շուտ և ճիշդ կերպով։

3—10. ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՑ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ԷՄԱՆՈՒԷԼ ՄԱՆԻԻ ԹԱՂՈՒՄԸ" վերնագրով բրօշիւրը։ Ծախվում է ՅՕԳՈՒՏ ՄԱՆՆԻԻ ԸՆՏԱՆԻՔԻ, Թիֆլիսի գրավաճառների մօտ։ Գինն է 10 կոպէկ։ 2—3

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցէրկօվնայա փողոցում, կօնստանտինօվի տան կից, որտեղ գտնվում է Լօրկօ և ընկ. ապարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ։

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՅԻ մի ՊՐՕՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում։ Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ՋԻՎԻՆԻ հռչակաւոր ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կաւերից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ։

Պրօվիզօրը մշտապէս գտնվում է և անձամբ պատրաստում է իմ գործարանում։ Շնորհիվ այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվին, բացի զէլտէրեան, մրգային և գազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հետազօտողների տուած կանոններին։ Արուեստական մինէրալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա։

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Տարաձայնութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ Ֆիրմայի ն շ ա ն ա կ ը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 45—50 (Ե)

Дозволено цензурою, Тифлисъ 5 Декабря 1888 г. Типографія Канцеляріи Главноначал. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.